

Հաստատված է նոր խմբագրությամբ
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

Նախագահ՝ Արթուր Զավադյան

«17» հունվարի, 2019թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/089Լ

« __ » _____ 2019թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ
Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր**

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ԲԱԺԻՆ 1. Ընդհանուր դրույթներ

Գլուխ 1. Կանոնների նպատակը

- 1) Սույն կանոնների նպատակը «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բորսա) անդամների, շուկայի մասնակիցների, ինչպես նաև նրանց կազմում կամ անունից գործող անձանց մասնագիտական էթիկայի կանոնների սահմանումն է, ինչը կբարձրացնի նրանց նկատմամբ վստահությունը և կնպաստի Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերի շուկայի զարգացմանը:

Գլուխ 2. Հասկացությունները

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) «**Հաճախորդ**». Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը շուկայի մասնակցի հետ կնքել է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր:
- 3) «**Մասնակից**». Շուկայի ցանկացած մասնակից կամ նրա անունից կամ կազմում գործող անձ:
- 4) «**Մասնագիտական էթիկա**». Հաշվի առնելով արտասահմանյան երկրների և համաշխարհային փորձը և հիմք ընդունելով բարեխղճության, օրինականության, հաճախորդի շահերի գերակայության, արհեստավարժության, անկախության, թափանցելիության և փոխհամագործակցության սկզբունքները՝ ՀՀ օրենսդրությանը և Բորսայի կանոններին համապատասխան սահմանված վարքագծի էթիկայի չափանիշներ:
- 5) «**Շահերի բախում**». Մասնակցի և նրա հաճախորդի նյութական ու այլ շահերի միջև առաջացող հակասությունը՝ տվյալ անձի կողմից հաճախորդի հանձնարարությամբ գործարք կնքելիս և/կամ կատարելիս:
- 6) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 3. Կանոնների կիրառման ոլորտը

- 1) Սույն կանոնները գործում են արժեթղթերի բորսայական առևտրի մասնակիցների միջև, ինչպես նաև Հաճախորդների և այլ անձանց հետ փոխհարաբերությունների ընթացքում:
- 2) Մասնակիցն իրավունք չունի սահմանել էթիկայի ներքին կանոններ, որոնք նախատեսում են ավելի մեղմ պահանջներ, քան սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բորսայի կանոններով:

ԲԱԺԻՆ 2. Մասնագիտական էթիկայի նորմեր

Գլուխ 4. Մասնագիտական էթիկայի հիմնական սկզբունքները

- 1) Մասնակցի մասնագիտական էթիկայի սկզբունքները սահմանում են նրա գործունեության բարոյական հիմքերը, որոնք ընդունվում և պահպանվում են Մասնակցի կողմից իր ամենօրյա գործունեության ընթացքում:

- 2) Մասնակցի մասնագիտական էթիկայի սկզբունքները հիմնվում են հանրության բարոյական պահանջների և չափանիշների վրա, ելնելով Մասնակցի ընդհանուր շահերից, օրինականության և արդարության պահպանման անհրաժեշտությունից:
- 3) Մասնագիտական էթիկայի հիմնական սկզբունքներն են՝
 - ա) բարեխղճությունը,
 - բ) օրինականությունը,
 - գ) հաճախորդի շահերի գերակայությունը,
 - դ) արհեստավարժությունը,
 - ե) անկախությունը,
 - զ) թափանցելիությունը,
 - է) փոխհամագործակցությունը:

Գլուխ 5. Բարեխղճությունը

- 1) Մասնակիցը պետք է արժեթղթերի շուկայում իր մասնագիտական գործունեությունն իրականացնի բարեխղճորեն, այսինքն՝ լիարժեքորեն գործադրի իր մասնագիտական հմտությունը, փորձը և գիտելիքները, ինչպես նաև գործի այնպիսի շրջահայացությամբ և պատասխանատվությամբ, որոնք անհրաժեշտ են հաճախորդների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:
- 2) Մասնակիցը, ելնելով հաճախորդի շահերից, պարտավոր է բարեխղճորեն իրականացնել վերջինիս հետ կնքված պայմանագրից բխող պարտականությունները, այդ թվում՝
 - ա) դիտարկել և գնահատել փաստերն ու հանգամանքները մասնագիտական տեսանկյունից, ինչպես նաև թույլ չտալ կանխակալություն, որը վնաս կհասցնի իր հաճախորդին,
 - բ) հետևողականություն ցուցաբերել հաճախորդների հետ կնքված պայմանագրերի պահանջների պահպանման հարցում,
 - գ) խուսափել շահերի բախումից կամ ձեռնարկել բոլոր օրինական միջոցառումները շահերի բախման դեպքում լավագույն լուծումն ապահովելու նպատակով,
 - դ) ձեռնարկել բոլոր հնարավոր օրինական միջոցառումներն իր հաճախորդից համապատասխան տեղեկատվություն ստանալու համար՝ կապված ներդրումային ռիսկերը կրելու նրա ցանկության և կարողության աստիճանը պարզելու հետ, որն անհրաժեշտ է հաճախորդի նկատմամբ իր պարտականությունների կատարման համար:
- 3) Մասնակիցն իրավունք չունի ոտնահարել հաճախորդի շահերն ու իրավունքները, ինչպես նաև գործարքներ կնքելիս չարաշահել հաճախորդի անտեղյակությունը, չիմացությունը կամ անփորձությունը:

Գլուխ 6. Օրինականությունը

- 1) Մասնագիտական գործունեություն իրականացնելիս Մասնակիցը պարտավոր է անշեղորեն պահպանել Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքների, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերի և Բորսայի կանոններով սահմանված պահանջները, ինչպես նաև բոլոր հնարավոր ողջամիտ և օրինական միջոցներով պահանջել իր հաճախորդներից դրանց պահպանումը:
- 2) Մասնակիցը պարտավոր է գրավոր հիմնավորմամբ հրաժարվել հաճախորդի կողմից տրված հանձնարարությունների կատարումից, եթե դրանք հակասում են Հայաստանի

Հանրապետությունում գործող օրենքներով կամ դրանցից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով կամ Բորսայի կանոններով սահմանված պահանջներին:

Գլուխ 7. Հաճախորդի շահերի գերակայությունը

- 1) Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից և իր հաշվին արժեթղթերով առուվաճառքի գործարքներ իրականացնելիս Մասնակիցը պարտավոր է իր հաճախորդի արժեթղթերի գնման կամ վաճառքի վերաբերյալ հանձնարարականը կատարել առաջնահերթ կարգով:
- 2) Մասնակիցը պետք է բոլոր հնարավոր օրինական միջոցներով խուսափի շահերի բախումից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տեղեկացնի հաճախորդին այդ մասին և ձեռնարկի բոլոր անհրաժեշտ օրինական և ողջամիտ միջոցառումները շահերի բախումը հաճախորդի օգտին լուծելու նպատակով, թույլ չտա սեփական շահերի բավարարում՝ հաճախորդի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման հաշվին:

Գլուխ 8. Արհեստավարժությունը

- 1) Մասնակիցը պարտավոր է ապահովել իր աշխատակիցների կողմից սույն կանոնների պահպանումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդների մասնագիտական ծառայություններ մատուցելու համար ներգրավել համապատասխան մասնագիտական գիտելիքներ և պատրաստվածություն ունեցող սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարող մասնագետների:

Գլուխ 9. Անկախությունը

- 1) Մասնակիցը արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելիս պարտավոր է թույլ չտալ այլ անձանց կողմից իր որոշումների վրա ազդելու և ճնշում գործադրելու հնարավորություն և/կամ նրանցից կախվածություն, որը կարող է վնաս հասցնել իր հաճախորդներին:

Գլուխ 10. Թափանցելիությունը

- 1) Մասնակիցը պարտավոր է ապահովել տեղեկատվության բացահայտումը Հայաստանի Հանրապետության գործող օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված կարգով:
- 2) Մասնակիցը պարտավոր է ցանկացած անձին հնարավորություն ընձեռել ծանոթանալու Մասնակցին տրված համապատասխան մասնագիտացված գործունեության լիցենզիայի պատճենին:
- 3) Մասնակիցը պարտավոր է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներին, դրանցից բխող այլ նորմատիվ իրավական ակտերին և Բորսայի կանոններին համապատասխան պահպանել արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնելու արդյունքում իրեն հայտնի դարձած ծառայողական և/կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը:

Գլուխ 11. Փոխհամագործակցությունը

- 1) Մասնակիցները պարտավոր են պատասխանատու և բարյացկամ վերաբերմունք ցուցաբերել միմյանց, ինչպես նաև Բորսայի անդամ չհանդիսացող մասնագիտացված անձանց նկատմամբ:
- 2) Մասնակիցը պարտավոր է զերծ մնալ այլ Մասնակցի գործունեության հրապարակային անհիմն քննադատությունից և քննարկումից, ինչպես նաև թույլ չտալ այլ գործողություններ, որոնք կարող են արատավորել նրա գործարար համբավը:
- 3) Եթե Մասնակցի հաճախորդը հանդիսանում է նաև մեկ այլ Մասնակցի հաճախորդ, ապա նշված անձինք իրավունք չունեն խտրականություն կամ ճնշում ցուցաբերել հաճախորդի նկատմամբ, ինչպես նաև վարկաբեկել նրան կամ միմյանց:
- 4) Մասնակիցը պարտավոր է իրականացնել սերտ համագործակցություն Բորսայի մարմինների և նրա աշխատակիցների հետ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներին, դրանցից բխող այլ նորմատիվ իրավական ակտերին և Բորսայի կանոններին համապատասխան: Նշված համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ միջոցներով՝
 - ա) տեղեկատվության փոխադարձ փոխանակում,
 - բ) Բորսայի տեխնիկական հնարավորությունների օգտագործում,
 - գ) արժեթղթերի շուկայի մասին տեղեկատվության ստացում,
 - դ) վեճերի լուծման ընթացակարգերի և մեխանիզմների կիրառում,
 - ե) Մասնակցի՝ Բորսայի մարմինների և նրա աշխատակիցների հետ համագործակցելու այլ ձևեր:
- 5) Մասնակիցը պարտավոր է բարեխղճորեն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իր պարտավորությունները:

ԲԱԺԻՆ 3. Մասնագիտացված գործունեության իրականացման նորմեր

Գլուխ 12. Մասնագիտացված գործունեության իրականացման ընդհանուր սկզբունքները

- 1) Մասնակիցը պետք է պահպանի բարեխիղճ և արդար մասնագիտացված գործունեության իրականացման սկզբունքները:
- 2) Մասնակցի կողմից իրականացվող մասնագիտացված գործունեությունը համարվում է բարեխիղճ եթե նա՝
 - ա) բարեխղճորեն և ազնիվ իրականացնում է իր հաճախորդների հանձնարարականները և արժեթղթերով իրականացվող գործառնություններից բխող պարտականությունները,
 - բ) կատարում է իր հաճախորդների հանձնարարականները՝ գործարքների կնքման լավագույն պայմանների ապահովմամբ,
 - գ) իր հաճախորդներին տրամադրում է արժեթղթերով իրականացվող գործառնություններից բխող պարտականությունների և հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը,
 - դ) կատարում է իր հաճախորդների հանձնարարականները՝ ըստ դրանց ստացման հաջորդականության, հաշվի առնելով հանձնարարականների էական պայմանները,
 - ե) ապահովում է հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների պատշաճ պահպանումը, դրանց անվտանգությունը և առանձին հաշվառումը,

- գ) հաստատում է գրանցամատյանների վարման և ներքին հաշվառման ընթացակարգեր և կանոններ ՀՀ օրենսդրությանը և Բորսայի կանոններին համապատասխան,
 - ե) պահպանում է ՀՀ օրենսդրության և Բորսայի կանոններով սահմանված այլ պահանջները:
- 3) Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնելիս Մասնակիցը պարտավոր է պահպանել սույն կանոնների 2-րդ գլխում նշված մասնագիտական էթիկայի նորմերը:
 - 4) Մասնակիցը պարտավոր է իր մասնագիտական գործունեությունը իրականացնել արժեթղթերի շուկայում մասնագիտացված այլ անձանց միջև բարեխիղճ մրցակցության և համագործակցության հիման վրա:
 - 5) Մասնակիցը պարտավոր է տեղեկացնել իր հաճախորդին վերջինիս հանձնարարականի կատարման ընթացքի մասին:
 - 6) Մասնակիցը պարտավոր է հատուցել իր հաճախորդի վնասները, որոնք առաջացել են իր կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Բորսայի կանոններով սահմանված պահանջների խախտմամբ գործելու արդյունքում:

Գլուխ 13. Խորհրդատվական ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջները

- 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով Մասնակիցն իրավասու է իր հաճախորդին մատուցել խորհրդատվական ծառայություններ միայն արժեթղթերի շուկայում առկա իրավիճակի պատշաճ (անաչառ) մասնագիտական գնահատում կատարելուց հետո՝ խտրականություն չդնելով հաճախորդների միջև:
- 2) Մասնակիցը իր հաճախորդին խորհրդատվական ծառայություն է մատուցում գրավոր կամ բանավոր տեսքով:
- 3) Մասնակիցը պետք է խուսափի հաճախորդին արժեթղթերով գործարքներ կատարելու վերաբերյալ խորհուրդ տալուց, եթե այդպիսի գործարքները չեն համապատասխանում ներդրումային ռիսկեր կրելու իր հաճախորդի ցանկության և կարողության աստիճանին, հաճախորդի ներդրումային նպատակներին, ֆինանսական հնարավորություններին, շահերին և ողջամիտ սպասումներին:
- 4) Մասնակցին արգելվում է հրապարակել կամ իր հաճախորդին այլ ձևով տրամադրել տեղեկություններ տվյալ արժեթղթի կանխատեսվող ավելի բարձր եկամտաբերության, իրացվելիության և հուսալիության մասին այլ արժեթղթերի և ֆինանսական գործիքների համեմատությամբ և երաշխավորել նշված տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև հայտնել ակնհայտ կեղծ կամ ոչ հավաստի տեղեկատվություն, որը կարող է հանգեցնել հաճախորդների մոտ թյուր կարծիքի ձևավորմանը:
- 5) Ներդրումների և ներդրումային քաղաքականության վերաբերյալ Մասնակցի կողմից տրամադրվող խորհրդատվական տեղեկատվությունը չպետք է պարունակի կոնկրետ արդյունքների մասին խոստումներ, որոշակի իրադարձությունների կանխատեսումներ առանց պատշաճ հիմնավորման: Կանխատեսումային բնույթ կրող տեղեկատվությունը պետք է նշվի որպես այդպիսին:
- 6) Նախորդ ժամանակահատվածներում արժեթղթերի եկամտաբերության մասին տեղեկություններ տրամադրելու դեպքում պետք է նշվի, որ այդպիսի եկամտաբերությունը երաշխավորված չէ հաջորդ ժամանակահատվածներում:
- 7) Եթե Մասնակցի հաճախորդը միաժամանակ հանդիսանում է մեկ այլ Մասնակցի հաճախորդ, ապա տվյալ դեպքում Մասնակիցը (Մասնակիցները) իրավունք չունի (չունեն)

ճնշում գործադրել տվյալ հաճախորդի վրա կամ ցուցաբերել խտրական վերաբերմունք, ինչպես նաև իրականացնել գործողություններ, որոնք արատավորում են միմյանց գործարար համբավը:

Գլուխ 14. Հաճախորդների հետ բարեխիղճ աշխատանքի նորմերը

- 1) Արժեթղթերի շուկայում որպես մասնագիտացված անձ հանդես գալիս Մասնակիցը պետք է ուշադիր լինի իր հաճախորդի նկատմամբ, վերջինիս հետ աշխատանքի ընթացքում հաշվի առնի մասնագիտական ծառայությունների մատուցման հետ կապված հաճախորդի ցանկությունները և պահանջները, պահպանի մասնագիտական էթիկայի և բարեխիղճ գործունեության Բորսայի կողմից ընդունված կանոնները և չափանիշները, ապահովի և վերահսկի դրանց կիրառումը իր աշխատակազմի ամենօրյա աշխատանքի ընթացքում:
- 2) Մասնակիցն իրավունք չունի առաջարկել կամ խորհուրդ տալ իր հաճախորդին գնել, վաճառել կամ փոխանակել արժեթուղթը, եթե դա չի բխում իր հաճախորդի շահերից:
- 3) Նախքան որևէ գործարք կատարելու վերաբերյալ իր հաճախորդին առաջարկություն կամ խորհուրդ տալը Մասնակիցը, հիմք ընդունելով հաճախորդի կողմից տրամադրված տեղեկություններն ու հայտարարությունները, պարտավոր է պարզել՝
 - ա) հաճախորդի ֆինանսական հնարավորությունների աստիճանը,
 - բ) ներդրումային ռիսկերը կրելու իր հաճախորդի ցանկության և կարողության աստիճանը.
 - գ) տեղեկություններ հաճախորդի գործունակության մասին,
 - դ) անհրաժեշտության դեպքում՝ լիազորագրերի առկայությունը:
- 4) Մասնակիցը իրավունք չունի առաջարկել կամ խորհուրդ տալ իր հաճախորդին գնելու ռիսկային արժեթղթեր, եթե դա չի համապատասխանում հաճախորդի ֆինանսական հնարավորություններին և ներդրումային ռիսկեր կրելու իր ակնհայտորեն արտահայտված ցանկությանը և կարողությանը:
- 5) Մասնակիցն իրավունք չունի երաշխիքներ կամ խոստումներ տալ իր հաճախորդին վերջինիս դրամական միջոցների ներդրումից սպասվելիք եկամուտների վերաբերյալ:
- 6) մասնակիցն իր հաճախորդի համար գործարք իրականացնելիս պետք է ձեռնարկի ողջամիտ ջանքեր՝ որոշելու համար շուկայում տվյալ արժեթղթի լավագույն գինը, որն առավելագույնս շահավետ կլինի հաճախորդի համար՝ հաշվի առնելով շուկայում առկա իրավիճակը:
- 7) Մասնակցի կողմից իր հաճախորդի համար գործարք իրականացնելիս բավարար ջանքեր չկիրառելը դիտարկվում է որպես սույն կանոնների 12.1. կետով սահմանված պահանջի խախտում:

Գլուխ 15. Մասնագիտական ծառայության դիմաց վճարը

- 1) Հաճախորդի կողմից մասնագիտացված ծառայությունների դիմաց Մասնակցին վճարվող վարձավճարը պետք է համապատասխանի մատուցվող ծառայությունների ծավալին և որակին: Վարձավճարի մեծությունը կարող է կախված լինել մատուցվող ծառայությունների բարդությունից, Մասնակցի մասնագիտական որակավորումից և փորձից:
- 2) Մասնակիցը պարտավոր է իր հաճախորդների հետ նախապես համաձայնեցնել և գրավոր ամրագրել մատուցվող ծառայությունների դիմաց վարձավճարի վճարման պայմանները և կարգը:

Գլուխ 16. Շահերի բախումը

- 1) Եթե Մասնակցի և նրա հաճախորդի միջև առկա է կամ հնարավոր է շահերի բախում, որի մասին կողմերը նախօրոք տեղյակ չեն եղել և որը հանգեցնում է Մասնակցի կողմից հաճախորդի շահերին վնասող գործողությունների կատարմանը, կամ եթե Մասնակիցը անբարեխղճորեն է գործում հաճախորդների շահերին առնչվող հարցերում, ապա նա պարտավոր է փոխհատուցել հաճախորդների կրած վնասները օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 2) Մասնակիցը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Բորսային՝ իր և իր հաճախորդի միջև տվյալ հաճախորդին մասնագիտական ծառայությունների մատուցման կապակցությամբ առաջացած կամ հնարավոր շահերի բախման մասին:

ԲԱԺԻՆ 4. Աշխատակիցներին ներկայացվող պահանջներ

Գլուխ 17. Ընդհանուր պահանջները

- 1) Մասնակիցը պարտավոր է համապատասխան հաստիքացուցակի համաձայն մասնագիտացված գործունեության իրականացման համար ներգրավել այն ֆիզիկական անձանց, որոնք ունեն անհրաժեշտ կրթություն և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում՝ մասնագիտական որակավորում:
- 2) Մասնակցին արգելվում է թույլատրել հաճախորդի մասնագիտական սպասարկումը համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող անձանց կողմից: Սույն դրույթը չի սահմանափակում Մասնակցի հսկողության ներքո գործող որակավորում չունեցող անձանց ներգրավումը հաճախորդին մասնագիտացված ծառայությունների մատուցման գործընթացում:
- 3) Մասնակիցը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք կապահովեն՝
 - ա) աշխատակիցների կողմից ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարում,
 - բ) իր աշխատակիցների մասնագիտական որակավորման և պատրաստվածության բարձրացում,
 - գ) տեխնիկական սարքավորումներով, ուսումնամեթոդական և տեղեկատվական հրապարակումներով, ՀՀ օրենսդրությամբ, Բորսայի կանոններով և այլ անհրաժեշտ նյութերով ապահովվածություն:
- 4) Եթե Մասնակցի աշխատակիցները որևէ պատճառով չեն բավարարում սույն կանոնների 17-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա Մասնակիցը պարտավոր է տեղեկացնել այդ մասին Բորսային և ձեռնարկել օրինական միջոցառումներ նշված անհամապատասխանությունը վերացնելու նպատակով:

Գլուխ 18. Աշխատակիցների ծառայողական էթիկան

- 1) Մասնակցի աշխատակիցները, որոնք մասնագիտացված գործունեության իրականացման ժամանակ լիազորված են ներկայացնելու Մասնակցի շահերը և/կամ իրենց պաշտոնական պարտականություններին համապատասխան ապահովում են նրա մասնագիտացված գործունեության իրականացումը, պարտավոր են՝
 - ա) բարեխղճորեն իրականացնել իրենց պաշտոնական պարտականությունները,
 - բ) նպաստել տվյալ Մասնակցի գործունեության զարգացմանը և բարգավաճմանը,

- գ) պահպանել միմյանց միջև քաղաքավարի գործնական հարաբերություններ, ինչպես նաև հաճախորդների ներկայացուցիչների, այլ Մասնակիցների պաշտոնատար անձանց և այլ աշխատակիցների հետ:
- 2) Մասնակցի աշխատակիցների միջև հարաբերությունները պետք է առաջնահերթ կարգով հիմնվեն արժեթղթերի շուկայում մասնագիտացված ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման համար փոխադարձ պատասխանատվության սկզբունքի վրա:
 - 3) Մասնակցի աշխատակիցները, որոնք իրենց պաշտոնական իրավասության շրջանակներում տիրապետում են գաղտնի կամ ծառայողական տեղեկատվությանը պարտավոր են բացառել նշված տեղեկատվության փոխանցման հնարավորությունը երրորդ անձանց: Մասնակիցը պարտավոր է միջոցներ ձեռնարկել՝ նշված տեղեկատվության ստացման նպատակով տվյալ աշխատակցի վրա ճնշում գործադրելը բացառելու նպատակով:
 - 4) Մասնակցի աշխատակցի աշխատանքի մեկ այլ վայր, այդ թվում նաև մեկ այլ Մասնակցի մոտ աշխատանքի փոխադրվելիս տվյալ աշխատակիցը պարտավոր է ձեռնպահ մնալ նախորդ աշխատավայրի ղեկավարների և աշխատակիցների գործունեության հրապարակային անհիմն քննադատությունից կամ գովաբանումից, իսկ վերջիններս պարտավոր են ձեռնպահ մնալ երրորդ անձանց հետ իրենց նախկին աշխատակիցների մասնագիտական և անձնական հատկանիշների քննարկումից: Սույն կետի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ Մասնակցի աշխատակիցը իրականացրել է հակաօրինական գործողություններ, վնաս է հասցրել իր ընկերության օրինական շահերին կամ իրականացրել է պաշտոնական զանցանքներ, որոնք վարկաբեկում են նրան՝ որպես արժեթղթերի շուկայի մասնագետի:
 - 5) Մասնակիցը իրավունք չունի օգտագործել շահադիտական նպատակներով իրեն հայտնի դարձած այլ Մասնակցին առնչվող գաղտնի և/կամ ծառայողական տեղեկատվությունը:
 - 6) Ծառայողական և գաղտնի տեղեկատվության անմատչելիությունը և պաշտպանվածությունը ապահովելու և Մասնակցի աշխատակիցների կողմից դրա տարածումը, հրապարակումը, այլ անձանց փոխանցումը, կամ իր կողմից շահադիտական նպատակներով օգտագործումը կանխելու նպատակով Մասնակիցը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ կազմակերպության տարածքում գտնվող համակարգչային և այլ տեխնիկայի անվտանգության, տեղեկատվության փաստաթղթային և էլեկտրոնային կրիչների, տվյալների համակարգերի անվտանգության ապահովման և մատչելիության սահմանափակման նպատակով:

ԲԱԺԻՆ 5. Գովազդի իրականացման նորմեր

Գլուխ 19. Գովազդին ներկայացվող պահանջները

- 1) Մասնակցի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև նշված Մասնակցի կողմից պատրաստված և տարածվող այլ գովազդը պետք է համապատասխանի գովազդի մասին օրենսդրությամբ, սույն կանոններով և Բորսայի այլ կանոններով սահմանված պահանջներին:
- 2) Սույն կանոնների հոդված 19 պահանջների պահպանման նպատակով՝ Մասնակցի կողմից տարածվող գովազդը պետք է անցնի ներքին հսկողության ընթացակարգով:
- 3) Բորսայի մարմինների կամ լիազորված պաշտոնատար անձանց պահանջով Մասնակիցը պարտավոր է ներկայացնել տեղեկատվություն, որը հանդիսանում է իր գովազդում պարունակվող տվյալների հիմնավորում:
- 4) Մասնակցի գովազդը պետք է պարունակի ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը իր մասին:

- 5) Եթե Մասնակիցը չի հանդիսանում գովազդում ներառված տեղեկատվության հեղինակը, ապա տարածվող գովազդի մեջ պետք է հստակ հղում պարունակվի այդ տեղեկատվության աղբյուրի մասին:
- 6) Մասնակիցը պատասխանատվություն է կրում գովազդի նկատմամբ սահմանվող պահանջների պատշաճ պահպանման, ինչպես նաև անբարեխիղճ գովազդով պատճառված վնասի համար:
- 7) Մասնակցի կողմից մատուցվող մասնագիտացված ծառայությունների գովազդը պետք է բացառի երրորդ անձանց խաբեության կամ մոլորության մեջ գցելու, ինչպես նաև այլ Մասնակիցների և այլ մասնագիտացված անձանց նկատմամբ անվստահության ստեղծման ցանկացած հնարավորություն:
- 8) Մասնակիցներին արգելվում է գովազդի տարածումը, որը պարունակում է՝
 - ա) անհիմն ինքնագովազդ, ինչպես նաև համեմատություններ արժեթղթերի շուկայի այլ Մասնակիցների կամ մասնագիտացված անձանց հետ,
 - բ) կեղծ, խեղաթյուրված, ոչ լիարժեք, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որը նպատակ ունի կամ կարող է մոլորության մեջ գցել, ապակողմնորոշել կամ ճնշում գործադրել հաճախորդների կամ այլ անձանց վրա,
 - գ) գաղտնի չհամարվող, սակայն հաճախորդին վարկաբեկող տեղեկություններ:
- 9) Մասնակիցը իրավունք չունի ուղղակի կամ անուղղակի ձևով վարձատրել զանգվածային լրատվության միջոցների աշխատակիցներին՝ նպատակ ունենալով զանգվածային լրատվության միջոցում հրապարակել իր մասին գովազդ չհանդիսացող բարենպաստ տեղեկություն:
- 10) Մասնակցին արգելվում է՝
 - ա) գովազդում ոչ հավաստի տեղեկատվություն տալը, կեղծ կանխատեսումներ կատարելը, ինչպես նաև այլ տեղեկության հրապարակումը, որի նպատակն է արժեթղթերի սեփականատերերին և արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեություն իրականացնող այլ անձանց խաբելը, ապակողմնորոշելը կամ մոլորության մեջ գցելը,
 - բ) օգտագործել գովազդը անբարեխիղճ մրցակցության նպատակով՝ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ անձի կամ անձանց գործունեության մեջ առկա թերությունների վերաբերյալ գովազդում զետեղելու միջոցով,
 - գ) գովազդի միջոցով խորհրդատվական ծառայություններ մատուցելը կամ առաջարկություններ կատարելը:

ԲԱԺԻՆ 6. Անցումային դրույթներ

Գլուխ 20. Կանոնների ուժի մեջ մտնելը

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: